| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 26 | Սեպտեմբեր | 2019 թ. |
| [4] Առաքման ամսաթիվ | | |
| 26 | Սեպտեմբեր | 2019 թ. |

# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 4484542869 |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

| Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| | | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

| Արտադրանք, ապրանք առաքող անձի | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

| Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի | |
|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [20] Լրացուցիչ տվյալներ | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Ամսաթիվ: |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ բաժանորդային հարկ | Այդ թվում՝ անջատված հարկի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 28155119բ/գ, | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

26/09/2019 13:51:47

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին**

« 19 » հուլիսի 2019թ. քաղ.Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ, երկրորդ դասի խորհրդական Ն.Մ. Գարեգինյանս, քննարկելով վարույթիս թիվ 28155119 քրեական գործի նյութերը՝

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019 թվականի մայիսի 21-ին՝ ժամը 00:10-ին, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Արթիկի բաժին ահազանգ է ստացվել, որ իրենց է ահազանգել Շիրակի մարզի Լեռնակերտ գյուղի 9-րդ փողոցի 25-րդ տան բնակիչ Վաչագան Սասունիկի Ավեյանը և հայտնել, որ իրեն ծեծել են:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ 2019 թվականի մայիսի 20-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, Շիրակի մարզի Լեռնակերտ գյուղի 9-րդ փողոցի 25-րդ տան դիմաց կենցաղային հարցերի շուրջ նույն գյուղի բնակիչ Արբակ Գևորգի Մալխասյանը և Վաչագան Սասունիկի Ավեյանը վիճաբանել են, որի ընթացքում Արբակ Մալխասյանը բռունցքներով հարվածներ է հասցրել Վաչագան Ավեյանին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Վաչագան Ավեյանը բացատրություն է տվել, որ 2019 թվականի մայիսի 20-ին ժամը 21:30-ի սահմաններում Լեռնակերտ գյուղում ոգելից խմիչքի ազդեցության տակ կենցաղային հարցերի շուրջ լեզվակռվի մեջ է մտել համագյուղացի Արբակ Մալխասյանի հետ, որի ընթացքում սեռական բնույթի հայհոյանքներ է կատարել վերջինիս հասցեին և գնացել է տուն: Նույն օրը ժամը 22:00-ի սահմաններում Արբակ Մալխասյանը գնացել է իր տուն, իրեն տանից դուրս է կանչել, որտեղ միասին զրուցել են, որի ընթացքում վերջինս ձեռքերով հարվածներ է հասցրել դեմքին և գլխին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Արբակ Մալխասյանը բացատրություն է տվել, որ 2019 թվականի մայիսի 20-ին ժամը 21:30-ի սահմաններում գյուղամեջում կենցաղային հարցերի շուրջ լեզվակռվի մեջ է մտել համագյուղացի Վաչագան Ավեյանի հետ, ով իր հասցեին կատարել է սեռական բնույթի հայհոյանքներ և գնացել է տուն: Քանի որ Վաչագան Ավեյանը գտնվել է ոգելից խմիչքի ազդեցության տակ, նույն օրը ժամը 22:00-ի սահմաններում ինքը գնացել է վերջինս տուն՝ նրա հորը հայտնի, որ զգուշացնի որդուն, որ իր հետ առնչություն չունենա, որտեղ իրեն հանդիպել է Վաչագան Ավեյանը, ինքը վերջինիս հետ տանից դուրս է գնացել, փորձելով պարզաբանել, թե ինչի համար է հայհոյել իրեն: Այդ ընթացքում Վաչագան Ավեյանը կրկին սեռական բնույթի հայհոյանքներ է կատարել իր հասցեին, ինքը մեկ անգամ հարվածել է վերջինիս գլխին, ով վայր է ընկել և ինքը բռունցքներով երեք անգամ հարվածել է նրա դեմքին: Այդ ժամանակ վիճաբանությանը միջամտել է Սասունիկ Ավեյանը, ով կանխել է վիճաբանության հետագա ընթացքը և գնացել է տուն:

Ըստ էության նույնաբովանդակ բացատրություններ են տվել նաև Սասունիկ Վաչագանի Ավեյանը, Վիկտորյա Դերենիկի Ավեյանը և Գոհար Սարգսի Մալխասյանը:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 0515 եզրակացության Վաչագան Ավեյանի ստացած մարմնական վնասվածքները՝ ձախ գագաթ-ծոծրակային և աջ նախաբազկի շրջանների քերծվածքների ձևով, հասցվել են բութ առարկաների ներգործության հետևանքով, հնարավոր է որոշմամբ նշված ժամանակահատվածում ու հանգամանքներում, յուրաքանչյուրն առնվազն մեկ ներգործության արդյունք են, որոնք առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 0514 եզրակացության Արբակ Մալխասյանի մարմնի վրա ներկա փորձաքննությամբ մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Կատարված ստուգումներով պարզվել է, որ Վաչագան Ավեյանը 2019 թվականից անցնում է <<Արթիկ բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերության նարկոլոգիական և հոգեբուժական կաբինետի հաշվառումներով՝ <<Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն, էմոցիոնալ անկայունություն>> ախտորոշմամբ:

Հիշյալ հանգամանքի վերաբերյալ դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը իր ՎԲ-73/08 նախադեպային որոշմամբ՝ /..... Երբ անձը, ում իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը, վճռաբեկ դատարանը գտնել է, որ նման իրավիճակում քրեական գործ հարուցելու առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով:

Դեպքի առթիվ 2019 թվականի մայիսի 31-ին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 28155119 քրեական գործ, որը նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ ՔԿ ՇՄ քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժին նախաքննություն կատարելու համար, կատարվում է նախաքննություն:

Քրեական գործի նախաքննության ընթացքում տուժող է ճանաչվել Վաչագան Սասունիկի Ավեյանը, ով ցուցմունք է տվել այն մասին, որ 2019 թվականի մայիսի 20-ին ժամը 21:30-ի սահմաններում Լեռնակերտ գյուղում ոգելից խմիչքի ազդեցության տակ կենցաղային հարցերի շուրջ լեզվակռվի մեջ է մտել համագյուղացի Արբակ Մալխասյանի հետ, որի ընթացքում սեռական բնույթի հայհոյանքներ է կատարել վերջինիս հասցեին և գնացել է տուն: Նույն օրը ժամը 22:00-ի սահմաններում Արբակ Մալխասյանը գնացել է իր տուն, իրեն տանից դուրս է կանչել, որտեղ միասին զրուցել են, որի ընթացքում ինքը կրկին սեռական բնույթի հայհոյանքներ կատարել Ա. Մալխասյանի հասցեին, որից հետո վերջինս ձեռքերով հարվածներ է հասցրել դեմքին և գլխին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Վ. Ավեյանը նաև նշել է, որ կատարվածի հետ իրենք հաշտվել են իրար հետ և Ա. Մալխասյանի որևէ բողոք-օահանջ չունի, խնդրել հարուցված քրեական գործը կարճել:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցերի պարզաբանման համար պահանջվում են դատահոգեբուժական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ, 244-րդ, 248-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 28155119 քրեական գործով նշանակել դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումն հանձնարարել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Դեպքի վերաբերյալ բացատրություն, ցուցմունք տալու ժամանակ և ներկայումս Վաչագան Սասունիկի Ավեյանը որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապում է, թե ոչ, եթե այո՝ ապա ինչ հիվանդությամբ:

բ/ Դեպքի վերաբերյալ բացատրություն, ցուցմունք տալու ժամանակ և ներկայումս Վաչագան Սասունիկի Ավեյանի մոտ առկա են ժամանակավոր հիվանդագին երևույթներ, հոգեկան գործունեության խանգարումներ, եթե այո՝ ապա ինչպիսիք:

գ/ Վաչագան Սասունիկի Ավեյանի մոտ առկա են արդյոք հոգեկան պակասություններ, որի հետևանքով նա ի վիճակի չէ ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները:

դ/ Վաչագան Սասունիկի Ավեյանը կարող է գիտակցել իր հետ կատարվածի բնույթն ու նշանակությունը:

ե/ Վաչագան Սասունիկի Ավեյանը դեպքի ժամանակ կարող էր ադեկվատ ձևով ըմբռնել և վերարտադրել իրականությունը և գործի համար կարևոր հանգամանքների մասին տալ ճիշտ ցուցմունքներ:

Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, որոնք որոշմամբ չեն առաջադրվել, սակայն դրանց պատասխանը մտնում է փորձագետների իրավասության մեջ ու դրանց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար՝ խնդրում եմ պատասխանել նաև այդ հարցերին:

**Քննիչ՝** **Ն.Մ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆ**